



Կ Ա Լ Ա Ն Խ Ո Ւ Ե /Kalanchoe/

Մեր բնակարաններում հաճախ կարելի է հանդիպել կալանխոե բույսին: Նրա հայրենիքն է Մադագասկար կղզին: Ժողովուրդը կալանխոեին կնքել է նաև «սենյակային ժենշեն» անունով: Այս բույսի տերևների հյութը դադարեցնում է արյունահոսությունը, բուժում թարախաբշտերը, այրվածքները, ծնկահողի շրջանում խոցերը, ոտքերի երակների լայնացումը, արագացնում վերքերի լավացումը: Այն նաև կանխում է լնդերի արյունահոսությունը, վերացնում է քորը, թեթևացնում է հարբուխը: Հյութն ունի մանրէասպան հատկություն: Կալանխոեն հարուստ է վիտամին C-ով, միկրո եւ մակրոէլեմենտներով, ինչպես նաև ակտիվ



ֆերմենտներով և օրգանական թթուներով (խնձորաթթու, կիտրոնաթթու, թրթնջկաթթու, քացախաթթու, այլումինիում, մանգան, երկաթ, կալցիում, սիլիցիում, պղինձ): Կալանխոեի հյութը կարելի է ստանալ նաև տնային պայմաններում: Բույսի տերևներն ու ընձյուղները 1-2 օր պահել սառնարանում, ապա մանրեցնել, ճզմել ու քամել երկտակ մառյայի օգնությամբ: Հյութը պատրաստ է օգտագործման ու միայն արտաքին: Ստացված հյութը կարելի է պահել սառնարանում 2-3 օր: Այս արևադարձային բույսը հեշտությամբ է աճում և բազմանում: Բույսի տերևների եզրերին աճում են սերմեր, որոնք խիստ կենսունակ են: Տերևներից ընկներով խոնավ հողի վրա, սերմերն արագորեն տալիս են արմատներ և աճում որպես նոր բույս: Ձմռանը բույսը պետք է պահել լուսամուտին մոտ, 14-16°C պայմաններում: Ամռանը կարելի է առատ ջրել, իսկ ձմռանը՝ ընդհակառակը, ջրվում է սակավ: Ծաղկում է դեկտեմբեր-հունվար ամիսներին: Ծաղիկները մանր են և վարդամանուշակագույն: Գոյություն ունի կալանխոեի 200 տեսակ: Այս բույսի բոլոր տեսակներն էլ ունեն շատ հյութեղ տերևներ ու ցողուններ: Այդ պատճառով էլ բույսի լատիներեն թարգմանությունը նշանակում է՝ «հաստ»: Ավելի հաճախ հանդիպող տեսակին, որ լինում է տներում, ժողովրդի մեջ ընդունված է անվանել «սենյակային ժենշեն»: Կալանխոեն աճում և բազմանում է Ավստրալիայի արևադարձային շրջաններում: Այն ունի հակաբորբոքային, վերականգնող, արյունը



կանգնեցնող հատկություններ: Այս բույսի հյութը կարելի է օգտագործել թրջոցների ու քսուքների տեսքով՝ թարախային պրոցեսներ բուժելու համար: Կալանխոեի թարմ հյութով կարելի է կանգնեցնել արյունահոսությունը, բուժել մաշկի տարբեր բնույթի ցաները: Հյութը

ստանում են բույսի կանաչ տերևներից՝ 7 օր պահելով 1-10°C պայմաններում և մութ վայրում: Կալանխոեի հյութը պետք է այնպես պատրաստվի, որ պարզ ու մաքուր լինի և ոչ թե՛ պղտոր: Արտադրվում են բույսից ստացվող հյութ (Succus Kalanchoes) և քսուք (Ungentum K.): Կալանխոե դեգրեմոնի տեսակը մեծ կիրառում ունի ժողովրդական բժշկությունում: Բույսի տերևի հյութն ունի հակաբորբոքային հատկություն. վերքի վրայից մաքրում է մահացած հյուսվածքները և նպաստում բուժմանը: Ժողովրդական բուժարարները խորհուրդ են տալիս ուտել «դուստր բույսի» տերևը ավիտամինոզի դեպքում, օրը 1թ/գ: Բուժիչ նպատակներով կարելի է օգտագործել նաև տնային պայմաններում պատրաստված հյութը, քսուքը և ոգեթուրմը:

Հյութ. Տերևը 6-7օր (ոչ ավելի) պահել 5-10°C դրական ջերմաստիճանի պայմաններում, մանրացրնել ձեռքով և տրորել փայտե գդալով, խյուսը ձգվել թանգիֆով, 48 ժամ թրմել, զգուշորեն զտել հեղուկ մասը (նստվածքը թափել): Հյութը խառնել 20%-ոց սպիրտի հետ (20:1), պահել սառնարանում: Հյութը կիրառում են տրոֆիկ խոցերի, թարախային ինֆեկցիաների, պամկելախոցերի դեպքում: Քառատակ ծալած թանգիֆը թրջել հյութի մեջ և դրնել վերքի վրա: Պատրաստի հեղուկ վաճառում են նաև դեղատներում:



Քսուք.



Խառնել 30մլ հյութ և 50գր լանոլին և վազելին: Պահել սառնարանում, օգտագործել տրոֆիկ խոցերի, չիբանի բուժման համար: Պատրաստի քսուքը վաճառում է նաև դեղատներում:

Ոգեթուրմ. 2ճ/գ մանրացրած տերևը 10օր թրմել 200մլ օդու մեջ, սենյակային պայմաններում, հետո քամել: Օգտագործել թրջոցների ձևով և վերքերը մաքրելու համար: Օգտակար է նաև ստամոքսի խոցի համար. խմել կալանխոեի հյութ՝ 1-ական թ/գ, օրը 3 անգամ: Շարունակել 1 ամիս, օգտագործելուց հետո անցնել բուժգնում, դրական արդյունքն ամրապնդելու համար պահպանեք անհրաժեշտ սննդակարգ:



Մինուսիտ. Թարմ հյութը լուծել եռացրած ջրի մեջ (1÷2), կատարել լվացում՝ կաթացնել քթի մեջ: Շարունակել 1 շաբաթ: **Վարիկոզ.** Մանր կտրատել տերևները, լցրնել ապակե տարայում կիսով չափ, իսկ մնացած ծավալը լրացնել օղիով, 10օր թրմել սենյակային պայմաններում՝ մութ տեղում, տարան պարբերաբար թափահարել, քամել: Ոգեթուրմը մերսել ոտքերին. սկսել ոտնաթաթից: Նվազեցնում և վերացնում է ցավերը: Երկարատև, կանոնավոր օգտագործման դեպքում զգալիորեն կնոսրանա երակների վարիկոզ ցանցը, շարունակել 3-5 ամիս:



Ֆիզիկական և մտավոր հոգնածություն. Դանդաղ ծամել և կուլ տալ 2-3 ճ/գ կալանխտեի թարմ տերևը: Անհամեմատ արդյունավետ է, քան սուրճը, վերականգնում է աշխատունակությունը:

Տուբերկուլյոզ. Թարմ հյութը լուծել ջրի մեջ (1÷3), խմել 1-ական ճ/գ՝ օրը 2 անգամ, ուտելուց հետո: Ստամոքսի, երիկամների բորբոքումներ. Խմել 1-ական թ/գ թարմ հյութ՝ օրը 3 անգամ: Մաստիս, բարձր ջերմություն. Այտուցված գեղձերի վրա դնել թրջոց թարմ հյութով՝ օրը 3 անգամ:

Այրվածք. 1թ/գ թարմ հյութը խառնել 1 ձվի դեղնուցի հետ, մշակել վերքը: Թարախային վերքերի, հերպեսի և այրվածքների համար շատ օգտակար է. Վերքի վրա կաթեցնել 2-3 կաթիլ թարմ հյութ՝ օրը 5-6 անգամ: Շարունակել 1 շաբաթ:

Լնդերի բորբոքում, ստոմատիտ. 1-2 թ/գ թարմ հյութը լուծել 100 մլ տաք ջրի մեջ, կատարել ողողումներ:

Կուպերի բորբոքում. Կաթեցնել կոպի վրա 1-2 կաթիլ թարմ հյութ՝ օրը 3-4 անգամ: Ականջի բորբոքում, ցավ. Կաթեցնել հիվանդ ականջի մեջ 1-2 կաթիլ թարմ հյութ՝ օրը 3-4 անգամ:



Գրիպ. Որպես նախապահպանություն գրիպի համաճարակից՝ կալանխտեի թարմ հյութով մշակել քթի լորձաթաղանթը (2-3 կաթիլ):



Երակների լայնացումից առաջացած ոտքի ցավերի դեպքում կարելի է ընդունել կալանխտեի թուրմ, իսկ պատրաստում են այն հետևյալ կերպ. կես լիտրն շի մեջ լցնել կալանխտեի տերևներն, ավելացնել 70%-ոց սպիրտ կամ սովորական օղի, այնուհետև շիշը դնել մութ տեղում և պահել 1 շաբաթ՝ երբեմն թափահարելով այն: Ստացված թուրմով մերսել ոտքերը՝ սկսած ոտքի թաթերից մինչև ծնկները: Բուժման կուրսը տևում է 2-4 ամիս: